ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՐԶ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5»

ք. Երևան «23» 09 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ թվով 19 համայնքներում (բնակավայրերում) տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները,

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3 800 000 (երեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Սույն պայմանագրի 2.4.5 և 2.4.6 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կատարողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ), բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40
կառավարական տուն 3	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150019223233283
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 05547385
Հ/Հ 900011037992, 900011038008, 900011038099, 900011038107, 900011038115, 900011038123, 900011038131, 900011038149, 900011038156, 900011038164 900011037596, 900011037604, 900011037620, 900011037638, 900011037646, 900011037653, 900011037661, 900011037679, 900011037687	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«23» 09 2021թ. կնքված
N «ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-21/5» պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման (ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ թվով 19 համայնքներում (բնակավայրերում) տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	50531140/9	դրամ	200 000	1	ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնք	Պատվիրատուի կողմից 1-ին փուլով նախագծանախահաշվային փաստաթղթերը Ընկերությանն ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող 20-րդ օրացուցային օրը ներառյալ, իսկ հաջորդող փուլերի համար՝ 15-րդ օրացուցային օրը ներառյալ:
	50531140/10	դրամ	200 000	1	ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնք	
	50531140/11	դրամ	200 000	1	ՀՀ Արմավիրի մարզի Փշատավան համայնք	
	50531140/12	դրամ	200 000	1	ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնք	
	50531140/13	դրամ	200 000	1	ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնք	
	50531140/14	դրամ	200 000	1	ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք	
	50531140/15	դրամ	200 000	1	ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնք	
	50531140/16	դրամ	200 000	1	ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք	
	50531140/17	դրամ	200 000	1	ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնք	
	50531140/18	դրամ	200 000	1	ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնք	
	50531140/19	դրամ	200 000	1	ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք	
	50531140/20	դրամ	200 000	1	ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնք	
	50531140/21	դրամ	200 000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնք	
	50531140/22	դրամ	200 000	1	ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնք	
	50531140/23	դրամ	200 000	1	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնք	
	50531140/24	դրամ	200 000	1	ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնք	
	50531140/25	դրամ	200 000	1	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայքն	
	50531140/26	դրամ	200 000	1	ՀՀ Վայոց Ձորի Եղեգիս համայանքի Շատին բնակավայր	
	50531140/27	դրամ	200 000	1	ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն բնակավայր	

	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	
1	**Քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման բնութագիրը**	
	ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման երկրորդ կետով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան	
2	**Կատարման ենթակա աշխատանքների անվանումը**	
	Պատվիրատուի կողմից ներկայացվող նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում	
3	**Նախագծի փորձաքննության ենթակա փաստաթղթեր**	
	• **Ճարտարապետական մաս** • **Կոնստրուկտորական մաս՝ այդ թվում ծրագրային հաշվարկի մաս** • **Ներքին և արտաքին էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն** • **Օդափոխություն, օդորակում, գազամատակարարում և ջեռուցում** • **Ներքին և արտաքին ջրամատակարարում, ջրահեռացում և հրդեհաշիջում** • **Էլեկտրաէներգետիկական համակարգեր՝ ենթակայաններ և կաթսայատներ** • **Ներքին կապի, թույլ լարման ցանցերի ու հակահրդեհային ազդարարման համակարգեր** • **Էներգախնայողության միջոցառումներ** • **Այլընտրանքային էներգիայի համակարգեր՝ արևային ջրատաքացուցիչներ, ֆոտովոլտային կայաններ /առկայության դեպքում/** • **Նախահաշիվ** • **Շինարարության կազմակերպման մաս**	
4	**Տեխնիկական առաջադրանք՝ համաձայն** ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի	
5	Օբյեկտի շինարարական աշխատանքների ընթացքում, հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, Պատվիրատուի կամ Հեղինակի ներկայացմամբ տվյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը ենթակա է պարզ փորձաքննության Ընկերության կողմից անհատույց, իսկ այդ փոփոխությունների ընդհանուր արժեքը չի կարող ավել լինել տվյալ օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի 15%-ից: Սահմանված սահմանաչափը գերազանցող փոփոխությունների փաթեթի լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորման դեպքում, եթե կողմերը այլ գրավոր համաձայնության չեն գալիս:	
6	Հիմնավորում	ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի թիվ 741–Ն և ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի թիվ 823-Ն որոշումներ:
7	Ծառայության մատուցման ժամկետը	
	Սկիզբը	**Ավարտը**
	Ծառայության սկիզբը համարվում է Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Ընկերությանը ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող օրը	Պատվիրատուի կողմից մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ թվով 19 համայնքներում (բնակավայրերում) տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերը 1-ին փուլով Ընկերությանն ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող **20-րդ օրացուցային օրը ներառյալ,** իսկ հաջորդող փուլերի համար՝ **15-րդ օրացուցային օրը ներառյալ:** **Ընդ որում, այն պարագայում երբ փորձաքննության արդյունքով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, նախագծող կազմակերպության կողմից 10 օրյա ժամկետում նախագծի լրամշակումն իրականացնելուց հետո, մասնակիցը /փորձաքննությունն իրականացողը/, կնքված պայմանագրի շրջանակներում պարտավորվում է իրականացնել կրկնակի փորձաքննություն 5 օրյա ժամկետում:**
8	**Նախագծային փաստաթղթերի պարզ քաղաքաշինական փորձաքննության ծառայությունները պետք է իրականացվեն հետևյալ լիցենզիայի ներդիրների շրջանակներում**	
	ԼԻՑԵՆԶԻԱ (<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք)	
	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության	

	թույլտվություն չպահանջող աշխատանքների)
	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ (<<< կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1533-Ն որոշում>) *(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*
	- **բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.** - **բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.** - **բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր.** - **էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր.** - **էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր.** - **կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր.** - **ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ճարտարապետական մաս.** - **ճարտարապետաշինարարական փաստաթղթերի կոնստրուկտորական մաս.**
9	**ԱՅԼ ՊԱՀԱՆՋ**
	Փորձաքննության եզրակացությունը պետք է հաստատված լինի ընտրված մասնակցի լիցենզիայի ներդիրներում ներառված այն անձանց կողմից/ստորագրությամբ/, ովքեր հանդիսանում են փորձաքննության մասով տվյալ բաժնի պատասխանատուները:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	Հիմք ընդունելով <<< կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի N 741-Ն և <<< կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 823-Ն որոշումները՝ նախատեսվում է նախագծել և կառուցել 144 տեղ հզորությամբ մոդուլային մսուր-մանկապարտեզի նոր շենքեր <<< 19 համայնքներում (բնակավայրերում)՝ հիմք ընդունելով Արևիկ համայնքի համար արդեն իսկ մշակված նախագիծը:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	• 144 տեղ հզորությամբ մոդուլային մսուր-մանկապարտեզների տեղակապման և ինժեներական ենթակառուցվածքների կառուցման աշխատանքների նախագիծ: • Տարածքի բարեկարգման կահավորման աշխատանքների նախագիծ: • Արտաքին ինժեներական ցանցերի կառուցում՝ ըստ անհրաժեշտության և համաձայն տեխնիկական պայմանների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
<<< քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
<<< ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037992, 900011038008,
900011038099, 900011038107, 900011038115,
900011038123, 900011038131, 900011038149,
900011038156, 900011038164 900011037596,
900011037604, 900011037620, 900011037638,
900011037646, 900011037653, 900011037661,
900011037679, 900011037687
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր բաղդատող՝
_____ Ա.Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150019223233283
ՀՎՀՀ 05547385
Տնօրեն՝
_____ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«23» 09 2021թ. կնքված
NՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

Օգտագործվելիք նյութերի			Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Քանակ	Գումար/դրամ	7

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037992, 900011038008,
900011038099, 900011038107, 900011038115,
900011038123, 900011038131, 900011038149,
900011038156, 900011038164 900011037596,
900011037604, 900011037620, 900011037638,
900011037646, 900011037653, 900011037661,
900011037679, 900011037687
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝
<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150019223233283
ՀՎՀՀ 05547385

Տնօրեն՝

_________________ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«23» 09 2021 թ. կնքված
ՊՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	հաշվեհամար	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	Մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման օրինակելի նախագծանահաշվային փաստաթղթերի տեղակապման պարզ քաղաքաշինական փորձաքննություն՝ ըստ ներքոնշյալ համայնքների															
	50531140/9	900011037992	ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/10	900011038008	ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/11	900011038099	ՀՀ Արմավիրի մարզի Փշատավան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/12	900011038107	ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/13	900011038115	ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**

1	50531140/14	900011038123	ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/15	900011038131	ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/16	900011038149	ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/17	900011038156	ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/18	900011038164	ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/19	900011037596	ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/20	900011037604	ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/21	900011037620	ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/22	900011037638	ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/23	900011037646	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/24	900011037653	ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնք									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/25	900011037661	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայքն									200 000	200 000	200 000	200 000	**200 000**

1	50531140/26	900011037679	ՀՀ Վայոց Ձորի Եղեգիս համայնքի Շատին բնակավայր									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
	50531140/27	900011037687	ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն բնակավայր									200 000	200 000	200 000	200 000	**200 000**
			Ընդամենը									**3 800 000**	**3 800 000**	**3 800 000**	**3 800 000**	**3 800 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037992, 900011038008,
900011038099, 900011038107, 900011038115,
900011038123, 900011038131, 900011038149,
900011038156, 900011038164 900011037596,
900011037604, 900011037620, 900011037638,
900011037646, 900011037653, 900011037661,
900011037679, 900011037687
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150019223233283
ՀՎՀՀ 05547385

Տնօրեն՝

_____ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«23» 09 2021թ. կնքված
ՈՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» 09 2021թ. կնքված
ՈՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-21/5 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԴՈՐԳԱԳԻՐ N 000055 [1884582564]

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Նոր Նորք» մ/ճ — ՊԿ\ID 354

"ARMBUSINESSBANK" CJSC "Nor Nork" branch — Ամսաթիվ\Date 17/09/21 16:20

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1150019223233283	900008000698	AMD 570,000.00

Վճարող\Remitter
ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ
ARCHITECT LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9905547385

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀՖիանսների նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Յինգ հարյուր յոթանասուն հազար դրամ

Նպատակ\Details
ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում

Կատարող\Maker Լիլիթ Մարտիրոսյան

3 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ՆՈՐ-ՆՈՐՔ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK CJSC NOR-NORK BRANCH

Կ.Տ.
ST.

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Նոր Նորք» մ/ճ — ՊԿ\ID 354

"ARMBUSINESSBANK" CJSC "Nor Nork" branch — Ամսաթիվ\Date 17/09/21 16:24

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1150019223233283	900008000664	AMD 380,000.00

Վճարող\Remitter
ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ
ARCHITECT LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9905547385

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Երեք հարյուր ութսուն հազար դրամ

Նպատակ\Details
ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-21/5 ծածկագրով պայմանագրի ապահովում

Կատարող\Maker Լիլիթ Մարտիրոսյան

3 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ՆՈՐ-ՆՈՐՔ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK CJSC NOR-NORK BRANCH

Կ.Տ.
ST.